Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

16399

361
Г-15

2010

2002

361
Բ-15

# ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ 1910 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 28 ԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19 ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ։

---

Ընկերութեան աշխատանքի տունը փակելուց յետոյ 1906 թուականից սկսած տարեկան ընդհանուր ժողովներում ժողովականներից շատերը շարունակ հարց են բարձրացրել և ցանկութիւն յայտնել թողնել ըստ կարելոյն բարեգործութեան այն եղանակը, որ ունի ողորմութեան ձեւ և անցնել օգնութեան աւելի խելացի ու նպատակայարմար եղանակի՝ այն է կատարել օգնութեան բաշխումը աշխատանքի միջոցով։

Օգնութեան այդ երկրորդ եղանակի առաւելութիւնը, իբրև սկզբունք, միշտ ընդունուել է բոլորի կողմից առանց որ և է հակաճառութեան, կարծիքների մեծ տարբերութիւն է յառաջացրել միայն այն հարցը, թէ ինչպէս կազմակերպել օգնութեան բաշխումը աշխատանքի միջոցով։ Այդ հարցի լուծումը դրուած է ոչ միայն Մարդասիրական Ընկերութեան առաջ, այլ և առհասարակ բոլոր բարեգործական ընկերութիւնների առաջ, և նրա լուծումը այնքան տարբեր է, որքան տարբեր են զանազան տեղերի ու ժամանակների պայմանները։

Պարզ է, որ մէկ կամ երկու ընդհանուր ժողովներում անկարելի էր լուծել այդպիսի մի բարդ հարց, այդ պատճառով 1908 թուի ընդհանուր ժողովը ընտրեց իր միջից մի յատուկ յանձնաժողով յանձինս պ.պ.՝ Հ. Մելքումեանի, Ա. Քալանթարի, բժ. Վ. Տէր-Գրիգորեանի, Կ. Խատիսեանի և Գ. Պապեանի, որոնց յանձնարարեց Վարչութեան հետ միասին ներկայացնել յառաջիկայ ընդհանուր ժողովին մի մանրամասն զեկուցում ձրի բնակարանների և որբանոցի ծրագիրները փոխելու մասին։ Բայց յանձնաժողովը ոչ մի նիստ չունեցաւ և հետեւեալ ընդհանուր ժողովին ոչ մի զեկուցում չը ներկայացրեց։

Այսպիսով Վարչութեան՝ իբրև Ընկերութեան գործադիր մարմնի գործունէութեան մէջ յառաջացել էր մի տեսակ անբնական դրութիւն։ Մի կողմից թէ Վարչութեան անդամները և թէ Ընկերութեան անդամներից շատերը համարում էին ապարդիւն և նոյն իսկ վնասակար օգնութեան այն ձեւը, որ սովորեցնում է մարդկանց ձրիակերութեան, միւս կողմից չէր առաջարկւում

օգնութեան մի ուրիշ, աւելի նպատակայարմար ձև, որով կարելի լինէր փոխարինել սովորական ողորմութիւնը։

Շնորհիւ այդ անբնական ու տարտամ դրութեան Ընկերութեան գործունէութեան բուն բարեգործական մասը վերջին 3—4 տարիներում ընթանում էր աւելի իներցիայով, քան վարչութեան անդամների և Հայ Հասարակութեան գիտակից ու սրտեռանդն մասնակցութեամբ։

Բայց այն, ինչ որ ժողովականներից շատերի համար եղել է և է լոկ սկզբունքի խնդիր, Վարչութեան անդամների համար ունեցել է նաև այն նշանակութիւնը, որ նրանք շօշափելի կերպով տեսել և զգացել են այդ տեսակ օգնութեան բոլոր բացասական հետևանքները։ Դրա վրայ պէտք է աւելացնել և այն որ ընկերութեան ձրի բնակարաններում ապրողները, ինչպէս և նրանց մէջ արմատացած պահանջները դէպի Մարդասիրական Ընկերութիւնը ժառանգութիւն էին մնացել Վարչութեանը 1905—6 խառնակ տարիներից։ Այդ պահանջների հիմքը կազմում էր այն հասկացողութիւնը, թէ Հայոց ազգը պարտական է իրանց խնամելու ու պահպանելու, իսկ իրանք աներկբայելի իրաւունք ունեն պահանջելու «ազգից» այն ամենը, ինչ իրենց հարկաւոր է։ Բանը հասել էր այնտեղ, որ նրանք սկսել էին թշնամական աչքով նայել որբանոցի վրայ, ինչպէս իրենց մրցորդի վրայ, և երբ ներկայ թւի գարնանը Վարչութիւնը միջոցներ ձեռք առաւ վերջ դնելու ընկերութեան տան մէջ բուն դրած մի քանի տգեղ երևոյթները և կրճատելու ապրողների մի քանի պահանջները, իբրև պատասխան Վարչութեան այդ քայլերին ապրողները սպառնացին, որ ցրիւ կը տան որբանոցը։ Շնորհիւ Վարչութեան ձեռք առած նախազգուշացնող միջոցների, նրանք մասամբ միայն կարողացան իրագործել իրանց սպառնալիքը, կոտրատելով որբանոցի շինութեան բոլոր ապակիները (181 ռ.)։ Սրանից յետոյ Վարչութեանը այլ ևս ոչինչ չէր մնում անելու, եթէ ոչ իսպառ մաքրել ձրի բնակարանները, հեռացնելով բոլոր ապրողների,ն բացի հաշմանդամներից, փակել ձրի ճաշարանը և այնուհետև մտածել մի այլ աւելի նպատակայարմար բանի ծառայեցնել թէ բնակարանները և թէ այն դրամական միջոցները, որոնք մինչև այժմ ծախսւում էին ձրի բնակարանների և ճաշարանի վրայ։

Ապրողներին բնակարաններից հեռացնելը, պարզ է, հեշտ գործ չէր և միանգամից չէր կարելի կատարել, այդ պատճառով մինչև ամառուայ վերջը հազիւ կարելի եղաւ բնակարանները բոլորովին դատարկել։

Ներկայ թւի սեպտեմբերին, երբ վերսկսուեցին Վարչութեան կանոնաւոր նիստերը, Վարչութիւնը իր միջից ընտրեց հինգ հոգուց բաղկացած մի մասնաժողով, որին յանձնարարեց մի ամսուայ ընթացքում ներկայացնել մանրամասն զեկուցում նախ՝ թէ ինչ աւելի նպատակայարմար բանի համար կարելի է գոր-

ծագրել նախկին ձրի բնակարանները և երկրորդ՝ ինչպէս կազմակերպել օգնութիւնը աշխատանքի միջոցով։

Մասնաժողովը սեպտեմբերի 9-ից մինչև հոկտեմբերի 4-ը ունեցաւ մի շարք խորհրդակցութիւններ և ձևակերպեց հետևեալ եզրակացութիւնները, որոնք ընդունուեցին Վարչութեան կողմից, նախօրօք քննութեան ենթարկուելով վեց նիստերի ընթացքում։

ա) Ըստ կարելոյն խոյս տալ դրամական օժանդակութիւն տալուց այն անձանց, ոյոնք աշխատելու ընդունակութիւն ու հնարաւորութիւն ունեն։

բ) Մարդասիրական Ընկերութեան գլխաւոր օգնութիւնը չքաւոր անձանց, մասնաւորապէս կանանց, պէտք է կայանայ նրանում, որ նա աշխատանքի նոր դռներ բանայ այն անձանց համար, որոնք ցանկանում են աշխատել, բայց գործ չեն գտնում։

գ) Ի նկատի ունենալով, որ Բագւում հազարաւոր օտարազգի կանայք կարողանում են գործ ճարել, իսկ հայ կանայք մնում են պարապ և դիմում են ողորմութեան տնային որոշ աշխատանքների (օրինակ խոհարարութիւն, լուացարարութիւն, աղախնութիւն) անընդունակ լինելու պատճառով, առաջարկւում է իբրև փորձ բանալ լուացքարան (прачешная) հայ կանանց ձեռքի լուացք սովորեցնելու համար և խոհանոց միջակ խոհարարուհիներ պատրաստելու համար։ Խոհանոցին կից անհրաժեշտ է բանալ ճաշարան պատրաստուած ճաշերը վաճառելու համար, որով մասամբ կը թեթևանան խոհանոցի ծախսերը, իսկ ապագայ խոհարարուհիները կը սովորեն ծառայութեան ճաշ մատակարարելիս։

դ) Ի նկատի ունենալով, որ շատ աշխատաւորներ անկարող կը լինեն յաճախել ընկերութեան լուացքարանը կամ խոհանոցը փոքրահասակ երեխաների տէր լինելու պատճառով, անհրաժեշտ է հիմնել մսուր (ЯСЛИ) թէ այդպիսիների համար և թէ առհասարակ այն բոլոր անձանց համար, որոնք ապրուստի աղբիւր ունենալու համար ստիպուած են ամբողջ օրով բացակայ լինել տանից, թողնելով անխնամ փոքրահասակ երեխաներին։

ե) Լուացքարանը և մսուրը հիմնել ընկերութեան տան մէջ Ստանիսլաւսկայայ փողոցում, իսկ խոհանոցը՝ անպատճառ քաղաքի կենտրոնում։

զ) Ընկերութեան տան ձրի բնակարանները (Լ. Սերգէևի կորպուսի) դարձնել էժանագին բնակարաններ, նշանակելով վարձ ամիսը 3 ռ., բայց նախ քան վարձով տալը բնակարաններում մի քանի փոփոխութիւններ կատարել, որոնց նպատակը պէտք է լինի բնակարանները միմեանցից առանձնացնել և մի քանի յարմարութիւններ ստեղծել։ Փոփոխութիւններից յետոյ բնակարանների վարձը բարձրացնել մէկ կամ երկու ռուբլիով։

է) Ի նկատի ունենալով ընկերութեան միջոցների սղութիւնը, բնակարան-

ների վերանորոգումը ինչպէս և լուացքարան բանալը, որի նախահաշիւը այստեղ ներկայացնում է ի գիտութիւն ընդհանուր ժողովի, յետաձգել մի տարի ժամանակով։

ը) Կար ու ձևի պատուէրներ ընդունելը, որ կազմակերպուած էր 1909 և 1910 թուականներին յատկապէս Նաւթարդիւնաբերողների խորհրդի Սև քաղաքի և Բալախանիի հիւանդանոցների պատուէրները կատարելու համար, շարունակել և ապագայում, կատարելով նաև մասնաւոր պատուէրներ։ Գործին մշտական ձև տալու համար հրաւիրել յատուկ ձև անող (закройщикъ), գնել կարի մեքենաներ և այլ հարկաւոր պիտոյքներ։ Այս բոլորի համար նշանակել տարեկան 600 ռուբլի։

## Նախահաշիւ ծրագրած հիմնարկութիւնների

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ** | | | | | | |
| ՄՇՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ | | | | | | |
| Ռոճիկ տնտեսուհուն (30×12) . . . . . . | 360 | — | | | | |
| " խոհարարին (30×12) . . . . . . | 360 | — | | | | |
| " 10 աշակերտուհիներին (100×12) . . | 1.200 | — | | | | |
| Մթերքներ 15 ճաշի համար (210×12) . . . | 2.520 | — | | | | |
| Վառելիք և լուսաւորութիւն (15×12) . . . | 180 | — | | | | |
| Ջուր (8×12) . . . . . . . . . | 96 | — | | | | |
| Բնակարանի վարձ . . . . . . . | 800 | — | | | | |
| Զանազան ծախսեր . . . . . . . | 84 | — | | | | |
| | 5.600 | — | | | | |
| Սպասւում է մուտք (225×12) . . . . . . | 2.700 | — | 2.900 | — | | |
| ՄԻԱՆՈՒԱԳ ԾԱԽՍԵՐ | | | | | | |
| Պլիտայ . . . . . . . . . . | 150 | — | | | | |
| Ամանեղէն և կահ կարասիք . . . . . . | 150 | — | 300 | — | 3.200 | — |
| **ՄՍՈՒՐ** (Ясли) | | | | | | |
| ՄՇՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ | | | | | | |
| Ռոճիկ կառավարչուհուն (50×12) . . . . . | 600 | — | | | | |
| " օգնականուհուն (25×12) . . . . . | 300 | — | | | | |
| " երկու դայեակներին (25×12) . . . | 300 | — | | | | |
| " ադախնուն (12×12) . . . . . . | 144 | — | | | | |
| " խոհարարուհուն (:5×12) . . . . . | 180 | — | | | | |
| Ուտելիք 40 երեխաների համար (240×12) . . | 2.880 | — | | | | |
| Դեղորայք (5×12) . . . . . . . . | 60 | — | | | | |
| Ջուր (10×12) . . . . . . . . . | 120 | — | | | | |
| Ճաշ 6 ծառայողների համար (30×12) . . . | 360 | — | | | | |
| Վառելիք և լուսաւորութիւն (15×12) . . . | 180 | — | | | | |
| Փոխանցումն . . | 5.124 | — | — | — | 3.200 | — |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Փոխանցումն . . | 5.124 | — | — | — | 3.200 | — |
| Չը նախատեսնուած ծախսեր (18×12) . . . . | 216 | — | | | | |
| | 5.340 | — | | | | |
| Սպասւում է մուտք . . . . . . . . | 450 | — | 4.890 | | | |
| **ՄԻԱՆՈՒԱԳ ԾԱԽՍԵՐ** | | | | | | |
| Երկաթէ մահճակալներ 10 հատ . . . . | 50 | — | | | | |
| Լուացարան 3 հատ . . . . . . . | 15 | — | | | | |
| Սպիտակեղէն . . . . . . . . | 200 | — | | | | |
| Ամանեղէն . . . . . . . . . | 50 | — | | | | |
| Կողինք 10 ձեւք . . . . . . . | 100 | — | | | | |
| Զանազան մանր ծախսեր . . . . . . | 85 | — | 500 | — | 5.390 | — |
| **ԷԺԱՆԱԳԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ** | | | | | | |
| Ռոճիկ դռնապանին և գիշերապահին . . . . | 480 | — | | | | |
| Ապահովագրութիւն . . . . . . . . | 134 | — | | | | |
| Վերանորոգութիւններ . . . . . . . | 180 | — | | | | |
| Զանազան ծախսեր . . . . . . . . | 120 | — | | | | |
| Հեռախօս . . . . . . . . . . | 76 | — | | | | |
| | 990 | — | | | | |
| Սպասւում է մուտք բնակարաններից . . . . | 540 | — | 450 | — | 450 | — |
| **ԿԱՐ ՈՒ ՁԵՒ** | | | | | | |
| Ռոճիկ ձեւ անողին, կարի մեքենայ, զանազան մանր ծախսեր . . . . . . . . | — | — | — | — | 600 | — |
| **ԼՈՒԱՑՔԱՐԱՆ** | | | | | | |
| **ՄՇՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ** | | | | | | |
| Ռոճիկ կարավարչուհուն (25×12) . . . . . | 300 | — | | | | |
| " լուացարարին (25×12) . . . . . . | 300 | — | | | | |
| " սպիտակեղէն ընդունողին և բաժանողին (20×12) | 240 | — | | | | |
| " 10 լուացարարուհիներին (100×12) . . | 1.200 | — | | | | |
| Ճաշ (60×12) . . . . . . . . | 720 | — | | | | |
| Փոխանցումն . . | 2.760 | — | — | — | 9.640 | — |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Փոխանցումն . . | 2.760 | — | — | — | 9.640 | — |
| Սպիտակեղէնի հաւաքելու և բաժան. ծախս (15×12) | 180 | — | | | | |
| Ջուր (օրեկան 60 վեդրօ) (27×12) . . . . . | 324 | — | | | | |
| Սապոն 240 կտոր 15 կոպ., (36×12) . . . | 432 | — | | | | |
| Լեղակ, սոդայ և այլն (13×12) . . . . . | 166 | — | | | | |
| Մազութ, կերոսին, ածուխ (40×12) . . . | 480 | — | | | | |
| Չը նախատեսնուած ծախսեր . . . . . . | 158 | — | | | | |
| | 4.500 | — | | | | |
| Մուտք սպասւում է (150×12) . . . . . | 1.800 | — | 2.700 | — | | |
| Մինուսայ ծախսեր . . . . . . . . . | — | — | 930 | — | 3.630 | — |
| Ընդամենը . . | — | — | — | — | 13.270 | — |

Փոխ-նախագահ Վարչութեան՝ Հ. Բ. Տէր-Միքայէլեան

Գանձապահ՝ Ս. Գ. Այվազեան

Վարչութեան անդամներ՝
- Աղամեան Ս. Մ.
- Պաստախանեան Ն. Ա.
- Սաֆարեան Օ. Յ.
- Թումանեան Շ. Ա.
- Պանչաունի-Մելքումեան Ա.
- Տէր-Օհանեան Ե.
- Յակոբեան Ա. Մ.
- Մարդանեան Ջ. Ա.
- Թաղիանոսեան Ե. Ջ.
- Պարոնեան Աղ. Յ.
- Վարդանեան Ա. Տ.

Քարտուղար՝ Թ. Շէկ-Յովսէփեան

Գործավար՝ Գ. Ս. Տէր-Ստեփանեան

# ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ

**ՄՈՒՏՔ** — *Նախահաշուի կատարումը յունուարի*

| ԻՆՉ ԱՂԲԻՒՐԻՑ Է ԵՂԵԼ ՄՈՒՏՔԸ | Գումար | | Ստացուել է 1/I—1/XII 1910 թ. | | 1910 թ. նախահաշուով նշանակուած է | | Նախահաշուի դիմաց ստացուած է | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Աւելի | | Պակաս | |
| | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
| ՏՈԿՈՍՆԵՐ | | | | | | | | | | |
| Ստացուած է . . . . . | 3.128 | 81 | | | | | | | | |
| Տրուած է % յատուկ ընթացիկ հաշուով գրաւ դրած տոկոսաբեր թղթերի դիմաց վերցրած պարտքի և տարուած է Թամամշեանի գումարի հաշուին դրամագլխի % %. . . | 1.545 | 94 | 1.582 | 87 | 2.000 | — | — | — | 417 | 13 |
| ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐ | | | | | | | | | | |
| Ստացուած է մէկ մշտական անդամից . . . . . | 150 | — | | | | | | | | |
| Ստացուած է տարեկան անդամներից . . . . . | 1.170 | — | 1.320 | — | 2.100 | — | — | — | 780 | — |
| ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ | | | | | | | | | | |
| Ստացուած է ծննդեան տօներին | 6.133 | — | | | | | | | | |
| » Զատկական տօներին | 4.240 | — | | | | | | | | |
| » Նաւթարդիւնաբերողների խորհրդից . . . | 500 | — | 10.873 | — | 11.000 | — | — | — | 127 | — |
| ԵՐԵԿՈՅԹ ԵՒ ԶԲՕՍԱՆՔ | | | | | | | | | | |
| Ստացուած է երեկոյթից . . | 6.119 | 03 | | | | | | | | |
| » զբօսանքից . . | 2.758 | 62 | 8.877 | 65 | 7.000 | — | 1.877 | 65 | | |
| ՉԸ ՆԱԽԱՏԵՍՆՈՒԱԾ ՄՈՒՏՔԵՐ | | | | | | | | | | |
| Ստացուած են զանազան նուէրներ | — | — | 1.009 | 76 | 1.560 | — | — | — | 550 | 24 |
| ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ | | | | | | | | | | |
| Վերցրուած է փոխարինարար աւելածախսը ծածկելու համար . | — | — | 1.509 | 45 | 1.512 | 73 | | | 1 | 28 |
| Ընդամենը . . | — | — | 25.172 | 73 | 25.172 | 73 | 1.877 | 65 | 1.875 | 65 |

## 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը 1910 թ. ԵԼՔ

| ԻՆՁԻ ՎՐԱՅ Է ԾԱԽՍՈՒԱԾ | Գումար | | Ծախսուած է 1/I—1/XII 1910 թ. | | 1910 թ. նախահաշւով նշանակուած է | | Նախահաշւի դիմաց ծախսուած է | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Աւելի | | Պակաս | |
| | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
| **ՆՊԱՍՏՆԵՐ** | | | | | | | | | | |
| Տրուած է մշտական նպաստներ . | 1.957 | 40 | | | | | | | | |
| » միանուագ » . | 1.319 | 54 | 3.276 | 94 | 3.500 | — | — | — | 223 | 06 |
| **ՃԱՇԱՐԱՆ** | | | | | | | | | | |
| Մթերքներ և վարչական ծախսեր | 3.295 | 94 | | | | | | | | |
| Ստացուած են նուիրատուութիւններ | 570 | — | 2.725 | 94 | 4 208 | — | — | — | 825 | 16 |
| **ՋՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ** | | | | | | | | | | |
| Վարչական և այլ ծախսեր . . | — | — | 4.056 | 90 | 3.400 | — | | | | |
| **ՈՐԲԱՆՈՑ** | | | | | | | | | | |
| Վարչական և այլ ծախսեր . . | 4.627 | 60 | | | | | | | | |
| Ստացուած են նուիրատուութիւններ | 504 | — | 4.123 | 60 | 4.500 | — | — | — | 376 | 40 |
| **ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ** | | | | | | | | | | |
| Նոր գրքեր, գրացուցակի տպագրութ. պարբերական հրատարակութիւններ և այլ ծախսեր | 4.339 | 88 | | | | | | | | |
| Եղել է մուտք . . . . | 928 | 72 | 3.411 | 16 | 4.000 | — | — | — | 588 | 84 |
| **ԶԱՆԱԶԱՆ ԾԱԽՍԵՐ** | | | | | | | | | | |
| Թղթերի ապահովագրութիւն, վարչական և այլ ծախսեր . . | — | — | 2.653 | 55 | 2.850 | — | — | — | 196 | 45 |
| **ՏԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ** | | | | | | | | | | |
| Դատաստանական, վարչական և այլ ծախսեր . . . . | 2 757 | 48 | | | | | | | | |
| Եղել է մուտք . . . . | 1.762 | 55 | 994 | 93 | 700 | — | 294 | 93 | | |
| **ՉԸ ՆԱԽԱՏԵՍՆՈՒԱԾ ԾԱԽՍԵՐ** | | | | | | | | | | |
| Խօլերայի պատճառով բացած երկու թէյարանների վրայ . | 2.017 | 43 | | | | | | | | |
| Ստացուած է նուէր 1496-56<br>Ծախսած տախտակներից 200-00 | 1.696 | 56 | 320 | 86 | — | — | 320 | 86 | | |
| Թումայեանի և Սերգէյեանի տների ու որբանոցի վերանորոգութ. . | — | — | 1.500 | — | — | — | 1.500 | — | | |
| **ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ** | | | | | | | | | | |
| Համաձայն կանոնադրութեան § 14 յատկացնում է ընդհանուր մուտքի 10% . . . . | — | — | 2.207 | 84 | 2.014 | 73 | 193 | 11 | | |
| Ընդամենը . . | — | — | 25.271 | 72 | 25.172 | 73 | 2.308 | 90 | 2.209 | 91 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՈԿՈՍՆԵՐ | | | | | | |
| Սպասւում է . . . . . . . . . | — | — | 2.000 | — | | |
| ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ | | | | | | |
| Ծննդեան տօներին . . . . . . . . | 5.500 | — | | | | |
| Զատկի տօներին . . . . . . . . | 4.000 | — | | | | |
| Նաւթարդիւնաբերողների խորհրդից . . . | 500 | — | 10.000 | — | | |
| ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐ | | | | | | |
| Մշտական 2 անդամից . . . . . . . | 300 | — | | | | |
| Տարեկան 250 » . . . . . . . | 1.500 | — | 1.800 | — | | |
| ԵՐԵԿՈՅԹ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ | | | | | | |
| Երեկոյթից . . . . . . . . . | 5.000 | — | | | | |
| Ներկայացումից . . . . . . . . | 1.000 | — | 6.000 | — | | |
| ՏԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ | | | | | | |
| Սպասւում է մուտք . . . . . . . | 2.000 | — | | | | |
| » ծախս . . . . . . . | 1.000 | — | 1.000 | — | | |
| ԶԸ ՆԱԽԱՏԵՍՆՈՒԱԾ ՄՈՒՏՔԵՐ | | | | | | |
| Սպասւում է . . . . . . . . . | — | — | 500 | — | 21.300 | — |
| ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ | | | | | | |
| Սպասւում է փոխառութիւն . . . . . . | — | — | — | — | 5.770 | — |
| Փոխանցումն . . | — | — | — | — | 27.070 | — |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ՄՑՈՒՐ 40 ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ** | | | | |
| Ռոճիկ ծառայողներին, սնունդ, վառելիք, լուսաւորութիւն, դեղորայք և այլ ծախսեր . | 5.340 | — | | |
| Սպասւում է մուտք . . . . . . | 450 | — | | |
| | 4.890 | — | | |
| Միանուագ ծախսեր . . . . . . . | 500 | — | 5.390 | — |
| **ԷԺԱՆԱԳԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ** | | | | |
| Ռոճիկ ծառայողներին, ապահովագրութիւն և այլ ծախսեր . . . . . . . . | 990 | — | | |
| Սպասւում է մուտք . . . . | 540 | — | 450 | — |
| **ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ** | | | | |
| Ռոճիկ ծառայողներին, մթերքներ, վառելիք, լուսաւորութիւն, բնակարանի վարձ և այլ ծախսեր . . . . . . . . . | 5.600 | — | | |
| Սպասւում է մուտք . . . . . | 2.700 | — | | |
| | 2.900 | — | | |
| Միանուագ ծախսեր . . . . . . . | 300 | — | 3.200 | — |
| **ԿԱՐ ՈՒ ՁԵՒ** | | | | |
| Ռոճիկ վերակացուհուն, վարպետուհիներին, նոր մեքենաներ և այլ ծախսեր . . . . | — | — | 600 | — |
| **ՆՊԱՍՏՆԵՐ** | | | | |
| Պատուականեաններին . . . . . . . | 760 | — | | |
| Բնակարան, սնունդ, օժիտ, թաղթափում և այլն | 2.740 | — | 3.500 | — |
| **ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ** | | | | |
| Նոր գրքեր, պարբերական հրատարակութիւններ, հայերէն գրքերի գրացուցակի տպագրութիւն և այլն . . . . . . . | 4.480 | — | | |
| Սպասւում է մուտք . . . . . | 1.080 | — | 3.400 | — |
| **ՈՐԲԱՆՈՑ** | | | | |
| 10 որբի պահպանութիւն յանուն Բ. Դօլուխանեանցի . . . . . . . . . | 1.860 | — | | |
| 25 որբի պահպանութիւն . . . . . . | 4.670 | — | | |
| | 6.530 | — | | |
| Սպասւում է նուիրատւութիւններ . . | 230 | — | 6.300 | — |
| Փոխանցումն . . | — | — | 22.840 | — |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Փոխանցումն . . | — | — | — | — | 27.070 | — |
| Ընդամենը . . | — | — | — | — | 27.070 | — |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Փոխանցումն . . | — | — | 22.840 | — | | |
| **ԶԱՆԱԶԱՆ ԾԱԽՍԵՐ** | | | | | | |
| Արժեթղթերի ապահովագրութիւն, տեղեկագրի տպագրութիւն, վարչական և այլ ծախսեր . | — | — | 2.300 | — | 25.140 | — |
| **ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ** | | | | | | |
| Համաձայն կանոնադրութեան § 14-ի Ընկերութեան բոլոր եկամուտների 10% աւելացնում է անձեռնմխելի դրամագլխին . . . . | — | — | — | — | 1.930 | — |
| Ընդամենը . . | — | — | — | — | 27.070 | — |

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библ...
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

16393

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0049346
16393